

<p style="text-align: center;">ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ</p> <p style="text-align: center;">ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ</p> <p style="text-align: center;"><i>Ընդունվել է 25.12.2006</i></p>	<p style="text-align: center;">LAW OF THE REPUBLIC OF ARMENIA ON COMMERCIAL ARBITRATION</p> <p style="text-align: right;">Adopted 25.12.2006</p>
<p style="text-align: center;">ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ</p> <p>Հոդված 1. Ընդհանուր սկզբունքները եւ գործողության ոլորտը</p> <p>1. Սույն օրենքի դրույթները հիմնվում են հետևյալ սկզբունքների վրա եւ պետք է մեկնաբանվեն այդ սկզբունքներին համապատասխան.</p> <p>1) արբիտրաժի իրականացման նպատակն է առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի ստանալ անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի լուծում.</p> <p>2) կողմերն ազատ են իրենց միջեւ վեճերի լուծման ընթացակարգի շուրջ համաձայնվելու հարցում, որը ենթակա է միայն օրենքով նախատեսված սահմանափակումների:</p> <p>2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է առևտրային արբիտրաժին առնչվող հարաբերությունների վրա՝ Հայաստանի Հանրապետության եւ այլ պետության կամ պետությունների միջեւ գործող պայմանագրերի պահպանման պայմանով:</p> <p>3. Սույն օրենքի գործողությունը, բացառությամբ սույն օրենքի 8-րդ, 9-րդ, 35-րդ եւ 36-րդ հոդվածների, տարածվում է միայն այն արբիտրաժի վրա, որի վայրը Հայաստանի Հանրապետության տարածքում է:</p> <p>4. Սույն օրենքի գործողությունը չի բացառում Հայաստանի Հանրապետության մեկ այլ օրենքի գործողություն, որի համաձայն՝ որոշակի վեճեր չեն կարող հանձնվել արբիտրաժի լուծմանը կամ կարող են հանձնվել արբիտրաժի լուծմանը միայն այն դրույթներին</p>	<p style="text-align: center;">CHAPTER 1. GENERAL PROVISIONS</p> <p>Article 1. General principles and scope of application</p> <p>1. The provisions of this Law are founded on the following principles and shall be construed accordingly:</p> <p>(1) The goal of conducting arbitration is to achieve fair resolution of disputes by an impartial arbitral tribunal without undue delay or expenses.</p> <p>(2) The parties shall be free to agree on the procedure of dispute resolution, subject only to limitations as defined by law.</p> <p>2. This Law applies to commercial arbitration, subject to any agreement in force between the Republic of Armenia and any other State or States.</p> <p>3. The provisions of this Law, except Articles 8, 9, 35 and 36, apply only if the place of arbitration is in the territory of the Republic of Armenia.</p> <p>4. This Law shall not affect any other law of the Republic of Armenia by virtue of which certain disputes may not be submitted to arbitration or may be submitted to arbitration only according to provisions other than those of this Law.</p>

<p>համապատասխան, որոնք սահմանված չեն սույն օրենքով:</p>	
<p><i>Հոդված 2. Սահմանումները եւ մեկնաբանման կանոնները</i></p> <p>Սույն օրենքի իմաստով՝</p> <p>1) «արբիտրաժե նշանակում է ցանկացած արբիտրաժ, անկախ դրա՝ մշտապես գործող արբիտրաժային հաստատության կողմից կամ առանց նման հաստատության իրականացվելու հանգամանքից.</p> <p>2) «արբիտրաժային տրիբունալե նշանակում է միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ.</p> <p>3) «դատարանե նշանակում է որեւէ պետության դատական համակարգի մասը կազմող մարմին կամ դատարան.</p> <p>4) «առեւտրայինե հասկացությունը ներառում է առեւտրային բնույթի բոլոր հարաբերությունները՝ ինչպես պայմանագրային, այնպես էլ ոչ պայմանագրային: Առեւտրային բնույթի հարաբերությունները մասնավորապես ներառում են հետեւյալ գործարքները՝ բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների եւ նրանց հաճախորդների միջեւ կնքված, ապրանքների ու ծառայությունների մատակարարման եւ փոխանակման, առեւտրային ներկայացուցչության կամ գործակալման, ֆակտորինգի, վարձակալության, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձեւերի, ծովային, օդային, երկաթուղային եւ ավտոմոբիլային փոխադրումների.</p> <p>5) այնտեղ, ուր սույն օրենքի դրույթները, բացառությամբ 28-րդ հոդվածի, կողմերին վերապահում են որեւէ կոնկրետ հարց լուծելու ազատություն, ապա այն ներառում է նաեւ</p>	<p>Article 2. Definitions and rules of interpretation</p> <p>For the purposes of this Law:</p> <p>(1) "arbitration" means any arbitration, whether or not administered by a permanent arbitral institution;</p> <p>(2) "arbitral tribunal" means a sole arbitrator or a panel of arbitrators;</p> <p>(3) "court" means a body or organ of the judicial system of a State;</p> <p>(4) the term "commercial" shall cover matters arising from all relationships of a commercial nature, whether contractual or not. Relationships of commercial nature particularly include the following transactions: any transaction concluded between banks or other financial organizations and the customers thereof, transactions for the supply and exchange of goods or services; commercial representation or agency; factoring; leasing; construction of works, consulting; engineering; licensing; investment; financing; insurance; exploitation agreement or concession; joint venture or other forms of industrial and business co-operation; carriage by air, sea, rail or road.</p> <p>(5) where provisions of this Law, except Article 28, leaves the parties free to determine a certain issue, such freedom includes the right of the parties to authorize a third party, including an institution, to</p>

կողմերի իրավունքը՝ այդ հարցը լուծելու նպատակով լիազորել երրորդ անձի, ներառյալ՝ որեւէ հաստատության.

6) այնտեղ, ուր սույն օրենքի դրույթները հիշատակում են, որ կողմերը համաձայնվել են կամ կարող են համաձայնվել կամ ցանկացած այլ կերպ հղում են կատարում կողմերի համաձայնության վրա, այդպիսի համաձայնությունը ներառում է համաձայնության մեջ նշված ցանկացած արբիտրաժային կանոններ.

7) եթե սույն օրենքի դրույթները, բացառությամբ 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի եւ 32-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, կիրառելի են հայցի նկատմամբ, ապա դրանք հավասարապես կիրառելի են նաեւ հակընդդեմ հայցի նկատմամբ, եւ երբ կիրառելի են պատասխանի նկատմամբ, հավասարապես կիրառելի են նաեւ հակընդդեմ հայցի պատասխանի նկատմամբ:

make that determination;

(6) where a provision of this Law refers to the fact that the parties have agreed or that they may agree or in any other way refers to an agreement of the parties, such agreement includes any arbitration rules referred to in that agreement;

(7) where a provision of this Law, other than in Articles 25(1)(a) and 32(2)(a), refers to a claim, it also applies to a counter-claim, and where it refers to a defence, it also applies to a defence to such counter-claim.

Հոդված 3. Գրավոր հաղորդակցություններ ստանալը

1. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա՝

1) գրավոր հաղորդակցությունը համարվում է ստացված, եթե դա հասցված է անձամբ հասցեատիրոջը կամ նրա ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայր կամ մշտական բնակության վայր կամ փոստային հասցեով: Այն դեպքում, երբ ողջամիտ հարցումներ կատարելուց հետո նշված հասցեներից ոչ մեկը չի կարող պարզվել, գրավոր հաղորդակցությունը համարվում է ստացված, եթե դա ուղարկված է հասցեատիրոջ^ա ուղարկողին հայտնի վերջին գործունեության վայր, մշտական բնակության կամ փոստային վերջին հայտնի հասցեով^ա պատվիրված նամակով կամ նշված գրավոր հաղորդակցությունն հասցնելու փորձի գրանցումն ապահովող որեւէ այլ ձեւով.

2) հաղորդակցությունը համարվում է ստացված այն հասցեատիրոջը սույն հոդվածի 1-ին մասի

Article 3. Receipt of written communications

1. Unless otherwise agreed by the parties:

(1) any written communication is deemed to have been received if it is delivered to the addressee personally or if it is delivered at his place of business, habitual residence or mailing address; if none of these can be found after making a reasonable inquiry, a written communication is deemed to have been received if it is sent to the addressee's last-known place of business, habitual residence or mailing address by registered letter or any other means which provides a record of the attempt to deliver it;

(2) the communication is deemed to have been received on the day it is so delivered as per paragraph 1(a) of this Article.

<p>1-ին կետին համապատասխան հասցվելու օրը:</p> <p>2. Սույն հոդվածի դրույթները չեն վերաբերում դատարաններում վարույթի շրջանակներում իրականացվող հաղորդակցություններին:</p>	<p>2. The provisions of this Article do not apply to communications in court proceedings.</p>
<p>Հոդված 4. Առարկելու իրավունքից հրաժարվելը</p> <p>1. Եթե կողմին հայտնի է, որ սույն օրենքի որևէ դրույթ, որի կիրառումը իրենց նկատմամբ կողմերը կարող են սահմանափակել, կամ արբիտրաժային համաձայնության որևէ պահանջ չի պահպանվել, եւ, այդուհանդերձ, կողմը շարունակում է արբիտրաժային վարույթը՝ չհայտնելով իր առարկությունները այդպիսի չպահպանման վերաբերյալ առանց անհարկի ձգձգման, կամ այդպիսի առարկություն ներկայացնելու համար կոնկրետ ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետի ընթացքում, ապա համարվում է, որ տվյալ կողմը հրաժարվել է առարկություն ներկայացնելու իր իրավունքից:</p> <p>2. Եթե արբիտրաժային համաձայնության կողմը հայցային պահանջ է ներկայացնում համաձայնության մյուս կողմի դեմ դատարան՝ հայցելով վերջնական որոշման կայացում այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն, եւ եթե մյուս կողմը չի առարկում դատարանում գործի քննությանը՝ արբիտրաժային համաձայնության առկայության հիմքով, ապա համարվում է, որ կողմերը հրաժարվել են վեճը արբիտրաժի միջոցով կարգավորելու իրենց իրավունքից:</p>	<p>Article 4. Waiver of right to object</p> <p>1. A party who knows that any provision of this Law from which the parties may derogate or any requirement under the arbitration agreement has not been complied with and yet proceeds with the arbitration without stating his objection to such non-compliance without undue delay or, if a time-limit is provided therefore, within such period of time, shall be deemed to have waived his right to object.</p> <p>2. If a party to an arbitration agreement files a claim against the other party to the agreement in a court seeking final judgment to resolve a dispute that the parties have agreed to arbitrate, and if the other party fails to object the litigation on the ground of existing arbitration agreement, then both parties shall be deemed to have waived their rights to arbitrate the dispute.</p>
<p>Հոդված 5. Դատական միջամտության սահմանները</p> <p>Արգելվում է որևէ դատական միջամտություն սույն օրենքով կարգավորվող հարցերին, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:</p>	<p>Article 5. Extent of court intervention</p> <p>In matters governed by this Law, no court shall intervene except where so provided in this Law.</p>
<p>Հոդված 6. Արբիտրաժին աջակցող էլ</p>	<p>Article 6. Court for certain functions of arbitration</p>

վերահսկող դատարանը

Սույն օրենքի 9-րդ հոդվածով, 11-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերով, 13-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածով, 27-րդ հոդվածով, 34-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը:

assistance and supervision

The functions referred to in Articles 9, 11(3), 11(4), 13(3), 14, 27 and 34 (2) shall be performed by the Court of First Instance of Kentron and Norq-Marash Districts of the Republic of Armenia.

ԳԼՈՒԽ 2 ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՍՍԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ

CHAPTER 2. ARBITRATION AGREEMENT

Հոդված 7. Արբիտրաժային համաձայնության հասկացությունը, ձևը եւ գործողությունը

Article 7. Definition, form and scope of arbitration agreement

1. Արբիտրաժային համաձայնությունը պայմանագրային կամ ոչ պայմանագրային որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջեւ կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու վերաբերյալ: Արբիտրաժային համաձայնությունը կարող է կնքվել ինչպես պայմանագրում արբիտրաժային վերապահման, այնպես էլ առանձին պայմանագրի (արբիտրաժային համաձայնագրի) ձևով:

1. “Arbitration agreement” is an agreement by the parties to submit to arbitration all existing or potential or certain disputes which have arisen or which may arise between them in respect of a defined legal relationship, whether contractual or not. An arbitration agreement may be in the form of an arbitration clause in a contract or in the form of a separate agreement (arbitration agreement).

2. Արբիտրաժային համաձայնությունը կնքվում է գրավոր: Համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված, եթե դա կատարվել է կողմերի ստորագրությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելով, կամ կնքված է նամակներով, հեռատիպով, հեռագրով, էլեկտրոնային կամ այդպիսի համաձայնության ձեւակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությունը, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ: Պայմանագրում կատարված հղումը այնպիսի փաստաթղթին, որը պարունակում է

2. Arbitration agreement shall be in writing. An agreement shall be deemed to be concluded in writing, if it is contained in a document signed by the parties or in an exchange of communications through sealed letters, telex, telegrams, electronic or other means of communication which provide a record of the agreement, or in an exchange of statements of claim and defence in which the existence of an agreement is alleged by one party and not denied by another. The reference in a contract to a document containing an arbitration clause constitutes an arbitration agreement provided that the contract is in writing and the reference is such as to make that clause a part of the contract. Arbitration agreement is also deemed to be in writing if a written offer to arbitrate from one party is in one way or another accepted by the other party.

արբիտրաժային վերապահում, համարվում է արբիտրաժային համաձայնություն այն պայմանով, որ պայմանագիրը կնքված է գրավոր ձևով, եւ տվյալ հղումը այնպիսին է, որ նշված վերապահումը դարձնում է պայմանագրի մաս: Արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված նաեւ, եթե արբիտրաժային համաձայնության մասին մի կողմի գրավոր առաջարկությունը որեւէ ձևով ընդունել է մյուս կողմը:

3. Արբիտրաժային համաձայնության կողմերից մեկի մահը չի հանգեցնում արբիտրաժային համաձայնության դադարման, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, կամ վիճելի իրավահարաբերությունը չի բացառում իրավահաջորդություն:

3. Decease of one of the parties of an arbitration agreement shall not cause termination of the arbitration agreement, unless otherwise agreed by the parties or unless the disputed legal relations exclude legal succession.

Հոդված 8. Արբիտրաժային համաձայնությունը եւ հայցի հարուցումը դատարան՝ ըստ վեճի էության

1. Դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն, պարտավոր է կողմերից մեկի միջնորդության հիման վրա, որը բերվել է ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը, հայրը թողնել առանց քննության, բացառությամբ, եթե գտնում է, որ այդ համաձայնությունն առ ոչինչ է, ուժը կորցրել է կամ չի կարող կատարվել:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցի առկայության դեպքում արբիտրաժային վարույթը, այդուհանդերձ, կարող է սկսվել կամ շարունակվել, եւ կարող է վճիռ կայացվել՝ հարցը դատարանում գտնվելու ընթացքում:

Article 8. Arbitration agreement and substantive claim before court

1. A court before which an action is brought in a matter which is the subject of an arbitration agreement shall, if a party so requests not later than when submitting his first statement on the substance of the dispute, refer the parties to arbitration unless it finds that the agreement is null and void, inoperative or incapable of being performed.

2. Where an action referred to in paragraph 1 of this Article has been brought, arbitral proceedings may nevertheless be commenced or continued, and an award may be made, while the issue is pending before the court.

Հոդված 9. Արբիտրաժային համաձայնությունը եւ դատարանի կողմից հայցի ապահովման

Article 9. Arbitration agreement and interim measures by court

<p>միջոցների կիրառումը</p> <p>Արբիտրաժային համաձայնության հետ անհամատեղելի չի համարվում եւ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված իրավունքներից հրաժարում չի հանդիսանում արբիտրաժի կողմի՝ արբիտրաժից առաջ կամ դրա ընթացքում ցանկացած պահի հայցի ապահովման միջոցներ կիրառելու միջնորդությամբ դատարան դիմելը եւ դատարանի՝ նման ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշում կայացնելը:</p>	<p>It is not incompatible with an arbitration agreement, nor a waiver of rights referred to in arbitration agreement for a party to request, before or during arbitral proceedings, from a court an interim measure of protection and for a court to grant such measure.</p>
<p>ԳԼՈՒԽ 3 . ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ԿԱԶՄԸ</p> <p>Հոդված 10. Արբիտրների թիվը</p> <p>1. Արբիտրների թիվը որոշվում է կողմերի համաձայնությամբ եւ պետք է լինի կենտ: Այն դեպքում, երբ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված է արբիտրաժային տրիբունալի ձեւավորում զույգ կազմով, ապա արբիտրների թիվը պետք է մեկով ավելացվի: Այս դեպքում ավելացվող արբիտրն ընտրվում է սույն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով:</p> <p>2. Արբիտրների թվի շուրջ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում արբիտրաժային տրիբունալը ձեւավորվում է երեք արբիտրի կազմով:</p>	<p>CHAPTER 3. COMPOSITION OF ARBITRAL TRIBUNAL</p> <p>Article 10. Number of arbitrators</p> <p>1. The number of arbitrators shall be determined by the consent of the parties and shall be odd. Where the arbitration agreement provides for formation of an arbitration tribunal of arbitrators of even number, the number thereof shall be added by one. In this case the added arbitrator shall be elected by the procedure referred to in Article 11(3)(1) of this law.</p> <p>2. Failing such agreement, the number of arbitrators shall be three.</p>
<p>Հոդված 11. Արբիտրների նշանակումը</p> <p>1. Կողմերն ազատ են արբիտրաժային համաձայնությամբ սահմանելու արբիտրին ներկայացվող ցանկացած պահանջ: Ոչ ոք չի կարող իր քաղաքացիության պատճառով զրկվել արբիտր նշանակվելու իրավունքից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Արբիտր կարող է լինել 18 տարին լրացած յուրաքանչյուր գործունակ ֆիզիկական անձ, եթե կողմերի համաձայնությամբ ավելի բարձր տարիք</p>	<p>Article 11. Appointment of arbitrators</p> <p>1. The parties are free to define by agreement qualifications for serving as arbitrator. No person shall be precluded by reason of his nationality from acting as an arbitrator, unless otherwise agreed by the parties. Any competent physical person at the age of 18 and above can be an arbitrator, unless a higher age is provided by the agreement of the parties.</p>

<p>նախատեսված չէ:</p> <p>2. Կողմերն ազատ են համաձայնեցնելու արբիտրի կամ արբիտրների նշանակման ընթացակարգը՝ սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերի դրույթների պահպանմամբ:</p> <p>3. Եթե վերոհիշյալ համաձայնությունը բացակայում է՝</p> <p>1) երեք կամ ավելի արբիտրներով իրականացվող արբիտրաժի դեպքում յուրաքանչյուր կողմը նշանակում է հավասար թվով արբիտր, եւ այդ կերպ նշանակված արբիտրները ձայների մեծամասնությամբ նշանակում են վերջին արբիտրին, որը հանդես է գալիս որպես տրիբունալի նախագահող: Եթե մի կողմը արբիտր նշանակելու մասին մյուս կողմի պահանջը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, չի նշանակում արբիտր, կամ կողմերի նշանակված արբիտրներն իրենց նշանակման օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, համաձայնություն ձեռք չեն բերում վերջին արբիտրի նշանակման շուրջ, ապա կողմի խնդրանքով նշանակումը կատարում է սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարանը.</p> <p>2) միանձնյա արբիտրի մասնակցությամբ արբիտրաժի դեպքում, եթե կողմերը չեն համաձայնվում արբիտրի նշանակման շուրջ, ապա կողմի խնդրանքով նշանակումը կատարում է այն կողմերի արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված նշանակողը, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարանը:</p> <p>4. Եթե նշանակման ընթացակարգի վերաբերյալ համաձայնությունը չի նախատեսում նշանակումն ապահովող այլ միջոցներ, ապա կողմերից յուրաքանչյուրն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պահանջով կարող է դիմել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարան այն դեպքերում, երբ կողմերի համաձայնեցրած ընթացակարգը</p>	<p>2. The parties are free to agree on a procedure of appointing the arbitrator or arbitrators, subject to the provisions of paragraphs 4 and 5 of this Article.</p> <p>3. Failing such agreement,</p> <p>(1) in an arbitration with three or more arbitrators, each party shall appoint the same number of arbitrators, and the arbitrators thus appointed shall appoint the last arbitrator, who shall act as the presiding officer of the tribunal. If a party fails to appoint the arbitrator within thirty days of receipt of a request to do so from the other party, or if the arbitrators appointed by the parties fail to agree on the appointment of the last arbitrator within thirty days of their appointment, the appointment shall be made, upon the request of a party, by the court specified in Article 6 of this Law;</p> <p>(2) in an arbitration with a sole arbitrator, if the parties are unable to agree on the arbitrator, he shall be appointed, upon request of a party, by an appointing authority provided under the arbitration agreement, and in absence of such an agreement by the court specified in Article 6 of this Law.</p> <p>4. Where the agreement on appointment procedure does not provide for measures ensuring the appointment, each of the parties can file a claim on taking necessary measures with the court established under Article 6 of this Law, in cases, where, under an appointment procedure agreed upon by the parties,</p> <p>(1) a party fails to act as required under such procedure, or</p>
--	---

<p>կիրառելիս՝</p> <p>1) կողմերից մեկը չի գործում դրա պահանջներին համապատասխան, կամ</p> <p>2) կողմերը կամ կողմերի նշանակած արբիտրները չեն կարողանում համաձայնության գալ սահմանված ընթացակարգի համաձայն, կամ</p> <p>3) սահմանված ընթացակարգի շրջանակներում երրորդ կողմը, ներառյալ՝ հաստատությունը, չի կատարում իրեն վերապահված որևէ գործառույթ:</p> <p>5. Սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերում նշված հարցերի վերաբերյալ սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարանի որոշումները բողոքարկման ենթակա չեն: Դատարանը արբիտրին նշանակելիս պարտավոր է հաշվի առնել նրա որակավորման վերաբերյալ կողմերի համաձայնության մեջ առկա պահանջները եւ այն հանգամանքները, որոնք կարող են ապահովել անկախ եւ անաչառ արբիտրի նշանակումը, իսկ միանձնյա կամ երրորդ արբիտր նշանակելիս պարտավոր է հաշվի առնել նաեւ կողմերի երկրների քաղաքացի չհանդիսացող անձին որպես արբիտր նշանակելու նպատակահարմարությունը:</p>	<p>(2) the parties, or the arbitrators appointed by the parties, are unable to reach an agreement expected of them under such procedure, or</p> <p>(3) a third party, including an institution, fails to perform any function entrusted to it under such procedure.</p> <p>5. A decision on a matter entrusted by paragraph (3) or (4) of this Article to the court specified in Article 6 shall be subject to no appeal. The court, in appointing an arbitrator, shall have due regard to any qualifications required of the arbitrator by the agreement of the parties and to such considerations as are likely to secure the appointment of an independent and impartial arbitrator and, in the case of a sole or third arbitrator, shall take into account as well the advisability of appointing an arbitrator of a nationality other than those of the parties.</p>
<p><i>Հոդված 12. Բացարկ հայտնելու հիմքերը</i></p> <p>1. Որպես արբիտր հնարավոր նշանակման մասին առաջարկ ստացած անձը պարտավոր է հայտնել ցանկացած այնպիսի հանգամանքների մասին, որոնք կարող են հիմնավոր կասկած առաջացնել նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ: Արբիտրը իր նշանակման պահից եւ արբիտրաժի ամբողջ ընթացքում^a մինչեւ արբիտրաժային տրիբունալի կողմից վերջնական վճռի կայացումը կամ արբիտրաժային վարույթի որևէ այլ ձեւով ավարտը, պարտավոր է կողմերին անհապաղ հայտնել ցանկացած այդպիսի հանգամանքների մասին, եթե նա</p>	<p>Article 12. Grounds for challenge</p> <p>1. When a person is approached in connection with his possible appointment as an arbitrator, he shall disclose any circumstances likely to give rise to justifiable doubts as to his impartiality or independence. An arbitrator, from the time of his appointment and throughout the arbitral proceedings until the final award has been rendered or the proceedings have otherwise finally ended, shall without delay disclose any such circumstances to the parties unless they have already been informed of them by him.</p>

<p>ավելի վաղ չի հայտնել վերջիններիս դրանց մասին:</p> <p>2. Արբիտրին բացարկ կարող է հայտնվել միայն այն դեպքում, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, կամ նա չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում:</p> <p>3. Կողմը կարող է բացարկ հայտնել իր կողմից կամ իր մասնակցությամբ նշանակված արբիտրին միայն այնպիսի հիմքերով, որոնք իրեն հայտնի են դարձել նշանակումից հետո:</p>	<p>2. An arbitrator may be challenged only if circumstances exist that give rise to justifiable doubts as to his impartiality or independence, or if he does not possess qualifications agreed to by the parties.</p> <p>3. A party may challenge an arbitrator appointed by him, or in whose appointment he has participated, only for reasons of which he has become aware after the appointment has been made.</p>
<p>Հոդված 13. Բացարկման ընթացակարգը</p> <p>1. Կողմերը իրենց հայեցողությամբ եւ սույն հոդվածի 3-րդ մասի դրույթների պահպանմամբ կարող են համաձայնվել արբիտրի բացարկման ընթացակարգի վերաբերյալ:</p> <p>2. Նման համաձայնության բացակայության դեպքում արբիտրին բացարկ հայտնելու մտադրություն ունեցող կողմը պարտավոր է արբիտրաժային տրիբունալի ձեւավորման կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որեւէ հանգամանքի մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, արբիտրաժային տրիբունալ ուղարկել գրավոր բացարկ՝ բացարկի հիմքերի շարադրմամբ: Եթե արբիտրը, որին բացարկ է հայտնվել, ինքնաբացարկ չի հայտնում, կամ մյուս կողմը չի համաձայնվում բացարկին, ապա բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը:</p> <p>3. Եթե կողմերի համաձայնեցրած կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով հայտնված բացարկը մերժվում է, ապա բացարկ հայտնած կողմը բացարկի մերժման մասին որոշումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Քանի դեռ կողմի նման դիմումի վերաբերյալ</p>	<p>Article 13. Challenge procedure</p> <p>1. The parties are free to agree on a procedure for challenging an arbitrator, subject to the provisions of paragraph (3) of this Article.</p> <p>2. Failing such agreement, a party who intends to challenge an arbitrator shall, within fifteen days after becoming aware of the constitution of the arbitral tribunal or of any circumstance referred to in Article 12(2), send a written statement of the reasons for the challenge to the arbitral tribunal. Unless the challenged arbitrator withdraws from his office or the other party agrees to the challenge, the arbitral tribunal shall decide on the challenge.</p> <p>3. If a challenge under any procedure agreed upon by the parties or under the procedure of paragraph 2 of this Article is not successful, the challenging party may request, within thirty days after having received notice of the decision rejecting the challenge, the court specified in Article 6 of this Law to decide on the challenge, which decision shall be subject to no appeal. While such a request is pending, the arbitral tribunal, including the challenged arbitrator, may continue the arbitral proceedings and make an award.</p>

<p>որոշում ընդունված չէ, արբիտրաժային տրիբունալը, ներառյալ՝ այն արբիտրը, որին բացարկ է հայտնվել, կարող է շարունակել արբիտրաժային վարույթը եւ վճիռ կայացնել:</p>	
<p>Հոդված 14. Պարտականությունների կատարման անհնարիությունը կամ չկատարումը</p> <p>1. Այն դեպքում, երբ արբիտրը իրավաբանորեն (de jure) կամ փաստացի (de facto) ի վիճակի չէ կատարել կամ այլ պատճառներով չի կատարում իր գործառույթները առանց անհարկի ձգձգման, նրա լիազորությունները դադարում են՝ ինքնաբացարկ հայտնելով, կամ երբ կողմերը համաձայնվում են նրա լիազորությունների դադարեցման մասին: Այլ դեպքերում, երբ առկա են տարաձայնություններ այդ հիմքերից որեւէ մեկի վերաբերյալ, արբիտրի լիազորությունների դադարեցման հարցը լուծելու նպատակով կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարան, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ:</p> <p>2. Եթե սույն հոդվածի կամ սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արբիտրն ինքնաբացարկ է հայտնում, կամ կողմը համաձայնվում է նրա մանդատի դադարեցմանը, ապա դա չի ենթադրում սույն հոդվածով կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերից որեւէ մեկի ընդունում:</p>	<p>Article 14. Failure or impossibility to act</p> <p>1. If an arbitrator becomes <i>de jure</i> or <i>de facto</i> unable to perform his functions or for other reasons fails to act without undue delay, his mandate terminates if he withdraws from his office or if the parties agree on the termination. Otherwise, if a controversy remains concerning any of these grounds, any party may request the court specified in Article 6 of this Law to decide on the termination of the mandate, which decision shall be subject to no appeal.</p> <p>2. If, under this Article or Article 13(2) of this Law, an arbitrator withdraws from his office or a party agrees to the termination of the mandate of an arbitrator, this does not imply acceptance of the validity of any ground referred to in this Article or Article 12(2) of this Law.</p>
<p>Հոդված 15. Արբիտրի փոխարինումը</p> <p>1. Եթե արբիտրի լիազորությունները դադարում են սույն օրենքի 13-րդ հոդվածով կամ 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կամ որեւէ այլ պատճառով ինքնաբացարկ հայտնելու կամ կողմերի համաձայնության ուժով կամ այլ հիմքերով, ապա նոր արբիտրը նշանակվում է նույն կարգով, որով նշանակվել էր փոխարինվող արբիտրը:</p> <p>2. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի</p>	<p>Article 15. Appointment of Substitute Arbitrator</p> <p>1. Where the mandate of an arbitrator terminates under Article 13 or 14 or because of his withdrawal from office for any other reason or because of the revocation of his mandate by agreement of the parties or in any other case of termination of his mandate, a substitute arbitrator shall be appointed according to the rules that were applicable to the appointment of the arbitrator being replaced.</p> <p>2. Unless otherwise agreed by the parties, if under Articles 12, 13 and 14 a sole arbitrator or a presiding</p>

համաձայնությամբ, երբ սույն օրենքի 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներին համապատասխան՝ փոխարինվում է միանձնյա արբիտրը կամ արբիտրաժային տրիբունալի նախագահողը, ապա նախկինում անցկացված բոլոր լսումները նորից են վերսկսվում, իսկ եթե փոխարինվում է ցանկացած այլ արբիտր, ապա այդպիսի լսումները կարող են վերսկսվել արբիտրաժային տրիբունալի հայեցողությամբ:

officer of the arbitral tribunal is substituted, any hearings held previously shall resume, or, if any other arbitrator is substituted, such prior hearings may resume at the discretion of the arbitral tribunal.

ԳԼՈՒԽ 4 . ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

CHAPTER 4. JURISDICTION OF ARBITRAL TRIBUNAL

Հոդված 16. Արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը

Article 16. Competence of arbitral tribunal to rule on its jurisdiction

1. Արբիտրաժային տրիբունալը իրավասու է որոշում կայացնելու իր իրավասության, ներառյալ՝ արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության վերաբերյալ: Այս նպատակով արբիտրաժային վերապահումը, որը հանդիսանում է պայմանագրի բաղկացուցիչ մաս, պետք է մեկնաբանվի որպես պայմանագրի մյուս մասերից անկախ համաձայնություն: Պայմանագրի ուժը կորցրած լինելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումը չի հանգեցնում արբիտրաժային վերապահման անվավերության:

1. The arbitral tribunal may rule on its own jurisdiction, including any objections with respect to the existence or validity of the arbitration agreement. For that purpose, an arbitration clause which forms part of a contract shall be treated as an agreement independent of the other terms of the contract. A decision by the arbitral tribunal that the contract is null and void shall not entail *ipso jure* the invalidity of the arbitration clause.

2. Արբիտրաժային տրիբունալի իրավասության բացակայության վերաբերյալ հայտարարությունը կարող է արվել ոչ ուշ, քան մինչև հայցի վերաբերյալ պատասխան ներկայացնելը: Կողմի՝ արբիտր նշանակելու կամ արբիտրի նշանակմանը մասնակցելու հանգամանքը նրան չի զրկում այդպիսի հայտարարություն անելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի կողմից իր իրավասությունը գերազանցելու վերաբերյալ հայտարարությունը պետք է արվի անմիջապես այն բանից հետո, երբ կողմի կարծիքով արբիտրաժի ընթացքում շոշափվում է այնպիսի հարց, որը դուրս է արբիտրաժային տրիբունալի իրավասության շրջանակից:

2. A plea that the arbitral tribunal does not have jurisdiction shall be raised not later than the submission of the statement of defence. A party is not precluded from raising such a plea by the fact that he has appointed, or participated in the appointment of, an arbitrator. A plea that the arbitral tribunal is exceeding the scope of its authority shall be raised as soon as the matter alleged to be beyond the scope of its authority is raised during the arbitral proceedings. The arbitral tribunal may, in either case, admit a later plea if it considers the delay justified.

Արբիտրաժային տրիբունալը ցանկացած դեպքում կարող է ընդունել ուշացված հայտարարությունը, եթե ուշացումը համարի հարգելի:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված հայտարարության վերաբերյալ արբիտրաժային տրիբունալը կարող է կայացնել որոշում՝ կամ որպես նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ, կամ անդրադառնալ դրան գործն ըստ էության լուծող որոշման մեջ: Եթե արբիտրաժային տրիբունալը իր իրավասության վերաբերյալ, որպես նախնական բնույթ ունեցող հարցի, կայացնում է որոշում, ապա կողմերից յուրաքանչյուրն այդ որոշման մասին տեղեկացում ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարան՝ տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու հայցով, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Մինչև դատարանի կողմից այդ հարցի լուծումը արբիտրաժային տրիբունալը կարող է շարունակել արբիտրաժային վարույթը եւ վճիռ կայացնել:

3. The arbitral tribunal may rule on a plea referred to in paragraph 2 of this Article either as a preliminary question or in an award on the merits. If the arbitral tribunal rules as a preliminary question that it has jurisdiction, any party may request, within thirty days after having received notice of that ruling, the court specified in Article 6 of this Law to decide the matter, which decision shall be subject to no appeal. While such a request is pending, the arbitral tribunal may continue the arbitral proceedings and make an award.

Հոդված 17. Արբիտրաժային տրիբունալի՝ հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը

Article 17. Power of arbitral tribunal to order interim measures

1. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը կողմերից յուրաքանչյուրի միջնորդությամբ կարող է որոշում կայացնել հայցի ապահովման այնպիսի միջոցներ կիրառելու վերաբերյալ, որոնք նա գտնի անհրաժեշտ՝ հաշվի առնելով վեճի առարկան: Արբիտրաժային տրիբունալը կարող է ցանկացած կողմից պահանջել տրամադրել ձեռնարկվող միջոցներին համապատասխանող ապահովում^a հայցի ապահովման միջոցների կիրառմամբ մյուս կողմին պատճառվելիք հնարավոր վնասների կանխման կամ հատուցման նպատակով:

1. Unless otherwise agreed by the parties, the arbitral tribunal may, at the request of a party, grant such interim measures, as the arbitral tribunal may consider necessary in respect of the subject-matter of the dispute. The arbitral tribunal may require any party to provide appropriate security in connection with such measure for the purpose of preventing or compensating the potential losses to be incurred to the other party through application of interim measures.

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշումները կարող են ամրագրվել միջանկյալ

2. Decisions specified under paragraph 1 of this Article may be established in the form of an interim award.

<p>վճռի ձեռով:</p> <p>3. Հայցի ապահովման միջոցները, որոնք պահանջել կամ կարգադրել է ձեռնարկել արբիտրաժային տրիբունալը՝ կայացնելով միջանկյալ վճիռ սույն հոդվածով սահմանված կարգով, կարող են ճանաչվել, հարկադիր կատարվել կամ չեղյալ ճանաչվել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարանի կողմից՝ սույն օրենքի 34-րդ, 35-րդ եւ 36-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ:</p>	<p>3 Interim measures that are claimed or ordered by the arbitral tribunal by taking an interim decision in accordance with the procedure defined under this Article, can be recognized, enforced or rendered ineffective by the Court specified under Article 6 of this Law without prejudice to the requirements of Articles 34, 35 and 36.</p>
<p align="center">ԳԼՈՒԽ 5 . ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ</p> <p><i>Հոդված 18. Կողմերի նկատմամբ հավասար մոտեցումը</i></p> <p>Արբիտրաժում կողմերի նկատմամբ պետք է կիրառվի հավասար մոտեցում, եւ յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվեն բոլոր հնարավորություններն իր գործի ներկայացման համար:</p>	<p align="center">CHAPTER 5. CONDUCT OF ARBITRAL PROCEEDINGS</p> <p>Article 18. Equal treatment of parties</p> <p>The parties shall be treated with equality and each party shall be given a full opportunity of presenting his case.</p>
<p><i>Հոդված 19. Ընթացակարգի կանոնների որոշումը</i></p> <p>1. Կողմերը սույն օրենքի դրույթների պահպանմամբ կարող են իրենց հայեցողությամբ համաձայնվել արբիտրաժային տրիբունալի կողմից վարույթի իրականացման ընթացակարգի շուրջ:</p> <p>2. Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալը սույն օրենքի դրույթների պահպանմամբ կարող է արբիտրաժային վարույթն իրականացնել այն ձևով, որը նպատակահարմար (պատշաճ, համապատասխան) կհամարի: Արբիտրաժային տրիբունալին տրված լիազորությունները ներառում են ապացույցների թույլատրելիության, վերաբերելիության, էականության եւ նշանակալիության որոշման լիազորությունը:</p>	<p>Article 19. Determination of rules of procedure</p> <p>1. Subject to the provisions of this Law, the parties are free to agree on the procedure to be followed by the arbitral tribunal in conducting the proceedings.</p> <p>2. Failing such agreement, the arbitral tribunal may, subject to the provisions of this Law, conduct the arbitration in such manner as it considers appropriate (proper, relevant). The power conferred upon the arbitral tribunal includes the power to determine the admissibility, relevance, materiality and weight of any evidence.</p>
<p><i>Հոդված 20. Արբիտրաժի վայրը</i></p> <p>1. Կողմերն իրենց հայեցողությամբ կարող են</p>	<p>Article 20. Place of arbitration</p> <p>1. The parties are free to agree on the place of</p>

համաձայնության գալ արբիտրաժի վայրի վերաբերյալ: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժի վայրը որոշում է արբիտրաժային տրիբունալը՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, ներառյալ՝ կողմերի համար հարմարությունը:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին մասի դրույթներին՝ արբիտրաժային տրիբունալը կարող է, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, նիստ գումարել ցանկացած այլ վայրում, որը հարմար է համարում, արբիտրների միջև խորհրդակցություն իրականացնելու, վկաներին, փորձագետներին կամ կողմերին լսելու կամ ապրանքներ, այլ գույք կամ փաստաթղթեր զննելու (ուսումնասիրելու) նպատակով:

arbitration. Failing such agreement, the place of arbitration shall be determined by the arbitral tribunal having regard to the circumstances of the case, including the convenience of the parties.

2. Notwithstanding the provisions of paragraph 1 of this Article, the arbitral tribunal may, unless otherwise agreed by the parties, meet at any place it considers appropriate for consultation among its members, for hearing witnesses, experts or the parties, or for inspection (examination) of goods, other property or documents.

Հոդված 21. Արբիտրաժային վարույթի սկիզբը

Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա տվյալ վեճի հետ կապված արբիտրաժային վարույթը համարվում է սկսված՝ վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու օրը:

Article 21. Commencement of arbitral proceedings

Unless otherwise agreed by the parties, the arbitral proceedings in respect of a particular dispute commence on the date on which a notice for that dispute to be referred to arbitration is received by the respondent.

Հոդված 22. Արբիտրաժի լեզուն

1. Կողմերն իրենց հայեցողությամբ կարող են պայմանավորվել արբիտրաժի վարույթի ընթացքում կիրառվող լեզվի (լեզուների) շուրջ: Նման համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալն ինքն է որոշում արբիտրաժի ժամանակ կիրառելի լեզուն (լեզուները): Այդ համաձայնությունը կամ որոշումը, եթե դրանցում այլ բան չի նշվում, վերաբերում է կողմերի ցանկացած գրավոր հայտարարություններին, գործի ցանկացած լուսմներին կամ արբիտրաժային տրիբունալի ցանկացած վճռին, որոշմանը կամ հաղորդակցությանը:

2. Արբիտրաժային տրիբունալը կարող է որոշել, որ գրավոր ապացույցը ուղեկցվի այն լեզվի կամ լեզուների թարգմանությամբ, որի

Article 22. Language

1. The parties are free to agree on the language (languages) to be used in the arbitral proceedings. Failing such agreement, the arbitral tribunal shall determine the language (languages) to be used in the proceedings. This agreement or determination, unless otherwise specified therein, shall apply to any written statement by a party, any hearing and any award, decision or other communication by the arbitral tribunal.

